ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

" 28 " մարտի 2013թ

№ 33-Ա

<<ԱՆԳԵՂԱԿՈԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության <<Հանրակրթության մասին>> օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշման հավելվածի 32-րդ և 34-րդ կետերով և համաձայն <<Անգեղակոթի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2013 թվականի մարտի 25-ի նիստի N 8 արձանագրության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացության, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել <<Անգեղակոթի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության համար անցկացված մրցույթի օրենսդրության համապատասխանությունը:

2. Կազմակերպության ընտրված տնօրեն Անահիտ Պետրոսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, ազատելով նրան տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. մարտի 28
ք. Կապան